ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/61

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Արարատի քաղաքային համայնքապետարան
Բողոք բերող՝ «Հարսնաձոր» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Արարատի քաղաքային համայնքապետարանի ներկայացուցիչներ՝ Կ. Մելքոնյանի, Ն. Կարապետյանի,
«Հարսնաձոր» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԱՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» ծածկագրով բաց մրցույթ, Արարատի քաղաքային այգու կապիտալ վերակառուցման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Հարսնաձոր» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 09.07.2021թ.-ին ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել Արարատի քաղաքային այգու կապիտալ վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՍՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու «Հարսնաձոր» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 09.07.2021թ.-ին:

09.07.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/61 համարի ծածկագիրը:

16.07.2021թ.-ին, 22.07.2021թ.-ին և 30.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 22.07.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.07.2021թ.-ին:

2. «Հարսնաձոր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Հարսնաձոր» ՍՊԸ-ն 09.07.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Արարատի քաղաքային զբոսայգու կապիտալ վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՍՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 28.06.2021թ.:

Սույն Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՀԱՐՍՆԱՁՈՐ» ՍՊԸ-ն և գնային առաջարկով ներկայացրած գների հաշվարկի արդյունքում ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու հաջորդող աշխատանքային օրը 29.06.2021թ., «ՀԱՐՍՆԱՁՈՐ» ՍՊԸ-ն հայտի ապահովման բնօրինակը ներկայացրել է Պատվիրատուին՝ ներկայացնելով նաև կից ուղեկցական գրությունը /պատճենը կցվում

է/:4երոհիշյալ ուղեկցական գրության վրա առկա է Արարատի համայնքապետարանի մտից կնիքը և ամսաթիվ 29.06.2021թ.:

Այնուհետև 02.07.2021թ. www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ հրապարակվել է «ՀՀ ՍՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» ծածկագրով բաց մրցույթի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որտեղից տեղեկացել ենք, որ «ՀԱՐՍՆԱՁՈՐ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմքով, թե իբրև

«ՀԱՐՍՆԱՁՈՐ» ՍՊԸ-ն հայտի ապահովման բնօրինակը ներկա]ացրել է սահմանված կարգի խախտումով /հայտարարությունը կցվում է/:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնամ և երանց միջև մրցակցության խրախուսում:

Հրավերի 4-րդ կետով սահմանված է, որ եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգ և էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա երեկոյի ժամանակով 17:00-ն ուղեկցող գրությամբ:

Ստացվում մի իրավիճակ, որ «ՀԱՐՍՆԱՁՈՐ» ՍՊԸ-ն հայտի ապահովման բնօրինակը սահմանված ժամկետում ներկայացրել է Պատվիրատուին՝ ունենալով ապացույց ոպեկացակաև գրության պատճենը նշվածմտիցկնիքով, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից անհասկանայի որոշումներ են կայացվել, մասնավորապես, ինչպես հետագայում է պարզվել 02.07.2021թ. gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է «ՀՀ ՍՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» ծածկագրով բաց մրցույթի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որտեղ նշված է եղել, որ «ՀԱՐՍՆԱՁՈՐ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմքով, թե ՍՊԸ-և հայտի ապահովման բնօրինակը ներկայացրել է սահմանված կարգի խախտումով:

Վերը նշված փաստի առթիվ առկա չէ որևէ արձանագրություն, որևէ նամակ կամ հրավերի պահանջների խախտման վերաբերյալ որևէ ծանուցում, այլ ընդամենը առկա է հրավերի պահանջներին համապատասխանող հայտի փաթեթ, սահմանված ժամկետում Պատվիրատուին ներկայացված բանկային երաշխիքի բնօրինակ և որ մեր կարծիքով ամենակարևորն է 16.000.000 ՀՀ դրամ ցածր ներկայացված գնային առաջարկ:

Բացի այդ, բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ գնահատող հանձնաժողովը հայտը մերժելու մասին որոշմամբ չի արձանագրել որևէ մանրամասնություն, թեինչով է «ՀԱՐՍՆԱՁՈՐ» ՍՊԸ-ն հայտի ապահովման բնօրինակը ներկայացրել է սահմանված կարգի խախտումով՝ հիմք տալով միայն կասկածել ինչ-որ եթանդրություններ հայտը մերժելու պատճառների մասին:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել Արարատի քաղաքային այգու կապիտալ վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՍՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու «Հարսնաձոր» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Ընկերությունը 21.07.2021թ.-ին ներկայացրած բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ինչպես արդեն հայտնել ենք, «ՀԱՐՍՆԱՁՈՐ» ՍՊԸ-ն հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը Ալանալու հաջորդող աշխատանքային օրը՝ 29.06.2021թ., «ՀԱՐՍՆԱՁՈՐ» ՍՊԸ-ն հայտի ապահովման ռևօրիևակը ներկայացրել է Պաավիրատուին՝ ներկայացնելով նաև կից ուղեկցական գրությունը /պատճենը կցվում է/:

Վերոհիշյալ ուղեկցական գրության վրա առկա է համայնքապետարանի մտից կնիքը և ամսաթիվ՝ 29.06.2021թ.:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «ՀԱՐՍՆԱՁՈՐ» ՍՊԸ-ի հայտը մերժել է, այն հիմքով, որ «ՀԱՐՍՆԱՁՈՐ» ՍՊԸ-ն հայտի ապահովման բնօրինակը ներկայացրել է սահմանված կարգի խախտումով:

Թիվ ԳԲՔԱ-ԷՕ-2021/61 ծածկագրով բողոքի քննության վերաբերյալ նշանակված նիստի ընթացքում Պատվիրատուի ներկայացուցիչները հնչեցրեցին փաստարկներ, որոնց վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

Պատվիրատուն պարտավորվել էր ներկայացնել ապացույց/կամ ապացույցներ/, որոնք կհավաստիացնեին մեզ և բողոքներ քննող անձին, որ ՍՊԸ-ի տնօրենը բանկային

երաշխիքը ներկայացրել է 17:00-ից հետո, այսինքն պետք է ներկայացվեր նաև տեսաձայնագրություն/:

Ծանոթանալով 19.07.2021թ. գրությանը և կից ներկայացված Փաստաթղթերին այդպես էլ Պատվիրատուի կողմից չհիմնավորված է մնում մեր կողմից բանկային երաշխիքի ուշ ներկայացնելու Փաստը, քանի որ ունենք գրանցամատյանի քաղվածք, որտեղ երևում է մեր ՍՊԸ-Ի և շենք մուտք գործած ներկայացուցչի տվյալները և անունը և առկա չէ որևէ ֆիքսված ժամ կամ տեսաձայնագրություն, որը թույլ կտա մտածել, որ ՍՊԸ-ն բանկային երաշխիքի…:

Պատվիրատուն մեղադրում էր «ՀԱՐՍՆԱՁՈՐ» ՍՊԸ-ին այն բանի համար, որ վերջինս միտումնավոր՝ բանկային երաշխիքի բնօրինակին կից ներկայացված ուղեկցական գրության վրա բացի համայնքապետարանի մտից կնիքից և ամսաթվից չի դրվել ժամ և րոպե:

Այս մասով հայտնում ենք, որ բողոքի քննության վերաբերյալ նշանակված նիստի ընթացքում համայնքապետարանի ներկայացուցիչները հայտնեցին, որ համայնքապետարանը իր փաստաթղթաշրջանառությունը իրականացնում է միայն կնիք և ամսաթիվ դնելով և ժամ/րոպե գրության մեջ չնշելը՝ ոչ թե ՍՊԸ-ի այսպես ասած միտումնավոր թույլ տրված քայլի արդյունքն է, այլ՝ համայնքապետարանի ներքին աշխատանքային գործունեության կարգը:

Պատվիրատուն մեղադրում էր «ՀԱՐՍՆԱՁՈՐ» ՍՊԸ-ին այն բանի համար, որ վերջինս պարտավոր էր բանկային երաշխիքի բնօրինակը ներկայացներ գնումների բաժին, բայց վերջինս այն ներկայացրել է ընդհանուր բաժին:

Այս մասով հայտնում ենք, որ նույնիսկ, եթե քննարկենք այս տարբերակը, թե ՍՊԸ-ի տնօրենը բանկային երաշխիքը ներկայացրել է ընդհանուր բաժին այլ փոխարենը պետք է ներկայացներ գնումների բաժին, ապա գտնում ենք, որ վերջիններիս պահանջը կամայականության արդյունք է և հիմք ընդունելով բողոքներ քննող անձի հարցին ի պատասխան հնչեցված պատասխանը, որ համայնքապետարանի փաստաթղթաշրջանառությունը իրականացնվում է ընդհանուր բաժնի շնորհիվ փաստում ենք, որ «ՀԱՐՍՆԱՁՈՐ» ՍՊԸ-ն ներկայացրել է պահանջված փաստաթուղթը՝ ուղեկցական գրության մեջ նշելով գնումների բաժին, իսկ տեքստի մեջ «ՀՀ ԱՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» ծածկագրով մրցույթի բանկային երաշխիքի բնօրինակ բառը, ուստի պետք է համարել, որ փաստաթուղթը մուտք է արվել գնումների բաժին «ՀՀ ԱՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովին:

Ամփոփելով վերը նշված փաստական հանգամանքերը գալիս ենք հետևյալ եզրահանգմանը.

«ՀԱՐՍՆԱՁՈՐ» ՍՊԸ-ն հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու հաջորդող աշխատանքային օրը 29.06.2021թ., «ՀԱՐՍՆԱՁՈՐ» ՍՊԸ-ն հայտի ապահովման բնօրինակը ներկայացրել է Պատվիրատուին՝ ներկայացնելով նաև կից ուղեկցական գրությունը, որը հաստատվել է նաև համայնքապետարանի մտից կնիքով, որի վրա դրվել է նաև ամսաթիվ.

Վերը նշված փաստի առթիվ մեր ներկայացվուն են ապացույցներ գրանցամատյանի համապատասխան էջի պատճեն, ուղեկցական գրությունը, որի վրա առկա է համայնքապետարանի մտից կնիքը և ամսաթիվ 29.06.2021թ. և ըստ մեզ ամենակարևոր փաստաթուղթը՝ բանկային երաշխիքի պատճենը /կցվում են/:

«ՀՀ ԱՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» ծածկագրով մրցույթի գնաեաաող հանձնաժողովը պնդում է, որ «ՀԱՐՍՆԱՁՈՐ» ՍՊԸ-ն հայտի ապահովման բնօրինակը ներկայացրել է սահմանված ժամկետի ուշացումով և հենց այդ հիմքով էլ մերժել է «ՀԱՐՍՆԱՁՈՐ» ՍՊԸ-ի հայտը, սակայն տվյալ հանգամանքը ապացուցելու համար մինչ օրս այդպես էլ չի ներկայացրել կամ ներկայացնում որևէ ապացույց:»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է «Հարսնաձոր» ՍՊԸ-ի կաղմից 09.07.2021թ. ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/61 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

3. <u>Արարատի քաղաքային համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 12.07.2020թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/11243-2021 գրությամբ դիմել է Արարատի քաղաքային համայնքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Հարսնաձոր» ՍՊԸ-ի կողմից 09.07.2021թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 13.07.2020թ.-ի թիվ 0307 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Արարատի քաղաքային համայնքապետարանի կողմից կազմակերպված «ՀՀ ԱՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» ծածկագրով բաց մրցույթի հետ կապված «Հարսնաձոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալներ դիրքորոշումը հետևյալն է.

1) «ՀԱՐՍՆԱՁՈՐ» ՍՊԸ-ն ՀՀ կառավարության կողմից հաստատված 526-Ն որոշման «Գնումների կազմակերպման կարգի» (այսուհետ կարգ) 32-րդ կետի ե) ենթակետի համաձայն պարտավոր էր մինչև 29.06.2021թ.-ի Երևանի ժամանակով ժամը 1700-ն ներկայացնել բանկային երաշխիքի ձևով հայտի ապահովման բնօրինակը, ինչը սակայն չի արել, կամ ներկայացրել է 17:00-ից հետո, ի դեպ, մյուս մասնակիցը «Մոնտաժտրանսսշին ՍՊԸ»-ն երաշխիքի բնօրինակը ընդհանրապես չի ներկայացրել, ինչի արդյունքում, գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով կարգի 42-րդ կետի պահանջները «Հարսնաձոր» ՍՊԸ-ի և «Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ի հայտերը մերժել է.

2) «Հարսնաձոր» ՍՊԸ-ի ներկայացուցիչը շատ լավ իմանալով, որ երաշխիքի բնօրինակը պետք է ներկայացնի գնումների բաժին (ինչպես նշված է իրենց կողմից ներկայացված ուղեկցող գրության մեջ), իսկ ավելի կոնկրետ գնահատող հանձնաժողովին, չգիտես ինչու այն ներկայացրել է ընդհանուր բաժին և բավարարվելով միայն մտից դրոշմակնիքով՝ հեռացել է:

Այն որ ընդհանուր բաժնի աշխատակիցը կարող էր չտիրապետել գնման գործընթացի առանձնահատկություններին, մասնավորապես՝ հայտի ապահովման բնօրինակի ներկայացման ժամի և անգամ րոպեի կարևորության մասին հասկանալի է, բայց որ «Հարսնաձոր» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, իրենց իսկ շահերից ելնելով չի պահանջել, որպեսզի մտից դրոշմակնիքի վրա նշվի նաև ներկայացման ժամը և րոպեն անհասկանալի է.

3) «Հարսնաձոր» ՍՊԸ-ն իր կողմից ներկայացված բողոքում նշել է, որ gnumner.am կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին որոշում և որևէ այլ արձանագրություն, նամակ կամ ծանուցում առկա չէ, ինչը չի համապատասխանում իրականությանը, քանի որ վերը նշված հայտարարության հիմք հանդիսացած արձանագրությունը ուղարկվել է մասնակիցներին armeps համակարգի «ոչ ավտոմատ ծանուցումներ» հավելվածի միջոցով, որտեղ և մանրամասն ներկայացված են հայտի մերժման հիմքերը:

Եվ վերջում անդրադառնալով 16.000.000 (տասնվեց միլիոն) ՀՀ դրամ ցածր ներկայացված գնային առաջարկին նշենք, որ

ա) եթե գործը նման ընթացքով չընթանար, ապա պետք է տեղի ունենային բանակցություններ գների նվազեցման նպատակով և պարզ չէ, թե որ մասնակիցը ինչքան կնվազեցներ նախնական առաջարկված գինը

բ) «Հարսնաձոր» ՍՊԸ-ի կողմից վկայակոչած 16.000.000 (տասնվեց միլիոն) ՀՀ դրամը վերաբերում է ԱԱՀ-ին, առանց որի կատարվում է գնային առաջարկների համեմատումը, իսկ պատվիրատուն վճարում է պայմանագրային գինը ինչը «Հարսնաձոր» ՍՊԸ-ի դեպքում կազմում է 99.810.000 (իննիսունինը միլիոն ութ հարյուր տաս հազար) ՀՀ դրամ, իսկ «Կառույց» Ա/Կ-ի դեպքում 99.973.640 (իննիսունինը միլիոն ինը հարյուր յոթանասուներեք հազար վեց հարյուր քառասուն) ՀՀ դրամ, այսինքն բացի նախահաշվային արժեքի և պայմանագրային գնի տարբերությունից, մեզ համար, որպես պատվիրատու, լրացուցիչ տնտեսում կարող էր դիտարկվել միայն 163.000 (մեկ հարյուր վաթսուներեք հազար) ՀՀ դրամը:

գ) Շատ լավ հասկանալով թե տնտեսումներն ինչ կարևոր նշանակություն ունեն համայնքի բյուջեի համար, միևնույն է գնահատող հանձնաժողովը պարտավոր է իր որոշումները կայացնել բացառապես օրենքների և ՀՀ կառավարության որոշումների շրջանակում:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/61 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Արարատի քաղաքային համայնքապետարանի կողմից Արարատի քաղաքային այգու կապիտալ վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 13.05.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ կամ Մրցույթ):

ii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 28.06.2021թ.-ի ժամը 11:00 ներառյալ, որին ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Հարսնաձոր» ՍՊԸ-ն:

iii. Ընկերությունը թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԱՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» ծածկագրով հրատապ բաց մրցույթ հրավերով սահմանված

մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. «Հարսնաձոր» ՍՊԸ-ն «ՀՀ ԱՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացրել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից 23.06.2021թ.-ին տրամադրված թիվ 3955-02 բանկային երաշխիքի (այսուհետ նաև՝ Երաշխիք) բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 28.06.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան սույն ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել նաև «Հարսնաձոր» ՍՊԸ-ն:

vi. Նույն արձանագրության 3.2-րդ և 3.3-րդ կետերի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության կողմից հաստատված 526-Ն որոշման գնումների կազմակերպման կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան հայտեր ներկայացրած մասնակիցներին որոշել է հրավիրել միաժամանակյա բանակցությունների: Գների նվազեցման նպատակով միաժամանակյա բանակցությունների նիստը հրավիրել 01.07.2021թ. ժամը 11:00-ին, հասցեն՝ ք. Արարատ, Շահումյան 34:

vii. Հանձնաժողովի 29.06.2021թ.-ի ժամը 17:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ մրցույթին մասնակից ընկերություններից «Հարսնաձոր» ՍՊԸ-ն և «Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետում չեն ներկայացրել հայտի ապահովման բնօրինակները:

viii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության կողմից հաստատված 526-Ն որոշման գնումների կազմակերպման կարգի 42-րդ կետի պահանջները, որոշել է «Հարսնաձոր» ՍՊԸ-ի և «Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ի հայտերը մերժել:

ix. «Հարսնաձոր» ՍՊԸ-ի կողմից «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից 23.06.2021թ.-ին տրամադրված թիվ 3955-02 բանկային երաշխիքի բնօրինակը Պատվիրատուին է ներկայացվել 29.06.2021թ.-ին՝ ժամը 17:00-ից հետո:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Հարսնաձոր» ՍՊԸ-ի կողմից 09.07.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով, հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան,

բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ՀՀ ԱՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» ծածկագրով բաց մրցույթի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 4.3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման

վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող կամ վերջինիս լիազորած անձը՝ ներկայացնելով այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է

նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ գործադիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, այդ թվում՝ հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արարատի քաղաքային համայնքապետարանի կողմից Արարատի քաղաքային այգու կապիտալ վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 13.05.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ԱՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» ծածկագրով բաց մրցույթի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 28.06.2021թ.-ի ժամը 11:00 ներառյալ, որին ի թիվս այլ մասնակիցների հայտ ներկայացրած «Հարսնաձոր» ՍՊԸ-ն, որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացրել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից 23.06.2021թ.-ին տրամադրված թիվ 3955-02 բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ 29.06.2021թ.-ը, չներկայացնելով երաշխիքի բնօրինակը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ուսումնասիրելով «ՀՀ ԱՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» ծածկագրով բաց մրցույթ հրավերը, «Հարսնաձոր» ՍՊԸ-ի հայտը, Հանձնաժողովի 29.06.2021թ.-ի նիստի

թիվ 4 արձանագրությունն ու Պատվիրատու կողմից բողոքի քննության ընթացքում ներկայացված տեսաձայնագրությունը՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից, Ընկերության հայտը մերժելու մասին կայացված որոշումը բխում է Օրենքի 34-րդ հոդվածով, Կարգի 42-րդ կետով և Հրավերի 8.10-րդ կետով սահմանված դրույթների պահանջներից, քանի որ Մրցույթի հրավերով սահմանվել է, որ մասնակիցը հայտով պետք է ներկայացնի հայտի ապահովում, իսկ բանկային երաշխիքի ձևով հայտի ապահովումը ներկայացնելու դեպքում, այն ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Ուստի, նման պայմաններում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Արարատի քաղաքային համայնքապետարանի կողմից Արարատի քաղաքային այգու կապիտալ վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 13.05.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ԱՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը, «Հարսնաձոր» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում կայացնելով, գործել է իրավաչափ, քանի որ «Հարսնաձոր» ՍՊԸ-ի կողմից թույլ է տրվել Կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ և Հրավերի 4.3-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված դրույթների խախտում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Ընկերության կողմից ներկայացված՝ «ՀՀ ԱՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 29.06.2021թ.-ին թիվ 4 արձանագրությամբ կայացված «Հարսնաձոր» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու ու մերժելու մասին կայացված որոշումները դադարեցնելու պահանջների մասին բողոքն անհիմն է և ենթակա մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Հարսնաձոր» ՍՊԸ-ի կողմից 09.07.2021թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/61 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**